Հրաւէր 'Ի Կ. Պոլիս Երեւելի պաշտօնէից եւ զլիաւորաց՝ պյլազրեալ :

Վերոգրեալ Լենդրոյն կարեւորութեան համար, հարկ եղած ատեն բոլոր խալամ ժողովուրդք միաբանութեամբ ընդհանրապէս զինուորելու, միաբանական կապերը ամրացնելու, և ուղիղ դիտաւորութեամբ Տէրութեան և օրինաց վերայ խորհելու համար արեւելեան և արեւմտեան (Անատոլէ եւ Ռումելի) եւ Ալպանիայի (Առնավուտի) կողմերը գտնուած երեւելի պաշտօնեայք, իշխանք եւ կուսակալք քաղաքապետաց եւ այլ մեծամեծ եւ երեւելի անձինք հրաւիրուեցան 'Ի Կ. Պոլիս : Նոքա եւս անմիջապէս ճամբայ ելլալով ՁԷմաղէլ ԵՎԼԷԼ ամոյ սկիզբները Մայրաքաղաքը հասան, և ըստ պատշաճի նախարարաց տուները հիւրընկալուեցան, եւ ապա պատուէր հրամանի եղաւ ըստ հարկաւորութեան պէտք եղած և ուզուած ատեն պատերազմի պիտոյք հոգալ. և նոքա յօժարութեամբ յանձն առին, իւրաքանչիւրն խոստացաւ իւր երկրին կարողութեան համեմատ զօրք, պաշար և այլ կարեւոր պիտոյք հոգալ եւ տալ : Յետ այնորիկ առաջի մեծի Վէզիրին իւրաքանչիւրն ըստ արժանաւորութեան խիլաներ զգեցան, և պատուաւորներէն ոմանք Աբքային ներկայանալով խոստացան փութաջան յօժարութեամբ Տէրութեան ծառայել. և ամենեցուն ծանուցագրեր տրուեցան, կազմ և պատրաստ գտնուիլ. և ապա իւրաքանչիւր ոք իւր տեղը վերադարձաւ :

(Շարունակելի :)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ԱԶԳ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Վանայ Գեր. Առաջնորդ Արժ. Տ. Թադէոս վարդապետի 18 5 Օգոստոս 31 ամսաթիւ մէկ Տեղեկագիրը կը ծանուցանէր, թէ Վանայ Խօշապ նահանգի բնակիչներէն Մարտիրոսեան Աւետիս անուն անձը, որ ասկից ասան և հինգ տարուց ջոփ առաջ իւր հայրենիքը ամուսնացած, միայն երեք ամիս իւր կնոջը հետ անցուցանելէն յետոյ՝ զանի թողած և մեկնած էր գաւառէն, մինչեւ հիմա հոն չը դառնալէն զատ՝ իւր մանկամարդ կինը երեսի վրայ թողեր և իրեն նկատմամբ բնաւ տեղեկութիւն մը չէ հաղորդեր՝ ոչ իւր կողակցին և ոչ այլումն :

Արժ. վարդապետը զայս կը ծանուցանէ, որպէս զի պէտք եղած տընօրէնութիւնն ըլլայ յայսմ մասին :

Արդ Կոստանդնուպօլսոյ Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովոյն որոշմանն համաձայն ներկայ Պաշտօնական ծանուցումս կը հրատարակուի Ազգային բովանդակ լրագրաց մէջ, որպէս զի ո՛վ որ կը ճանաչէ յիշեալ Խօշապցի Մարտիրոսեան Աւետիսը, եւ գիտէ՝ թէ ուր է նա, և ինչ կ'ընէ, կամ թէ մեռած է թէ կենդանի. անմիջապէս Ազգ. Պատրիարքարանիս իմաց տայ 'ի գիտութիւն և 'ի պատշաճ տնօրէնութիւն :

17 Մայիս 1876 : (ԿՆԻՔ)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պերլինէն գրուած նամակէ մը ×աղուած× :

"Որչափ որ մոռադիր էի այս տեղէն ելլալէն յետոյ երթալ նախ՝ Անգլիա, ուր կը գտնուի Ժեղուիթայ մեծ

դպրոցը և անոր Զմմարու վանքը, ապա Զահլէ քաղաքը, Պաալբէք և այն մինչեւ Դամասկոս. սակայն որովհետեւ մինչեւ Այն-Թուրա հասնելիս մեր առաջնորդին անձրկութիւնը եւ անհմտութիւնը չը վատահացոյց զմեզ, վերադարձանք կրկին 'ի Պէրութ։ Ճանապարհին բաւական զուարճալի տեսարաններ վայելեցի'ք. մանաւանդ Նահր-էլ-էլլ ըսուած գետի բերանը շատ զուարճալի և հաճոյական է. ուր կ'երթան Պերութի բնակիչք զբօսանաց և զուարճութեան համար։ Սորա մօտի լերան երկու ապառաժներուն վերայ պատուհանաձեւ երկու փորուածքներ կան, որոց միոյն վերայ գրուած է "1860 — 1861. Նափոլէոն Գ. Կայսր Գաղղիացւոց և բանակ Գաղղիական". մնացեալ գրերը չը կարողացայ կարդալ. վասն զի աւելի մանր էին և դժուարընթեռնլի. միայն այսչափը կարողացայ մակաբերել, որ բանակէն յետոյ եկած բառը զօրապետի անունն ալ ունի. կայ ուրիշ արձանագրութիւն մի եւս աւելի հին և լատիներէն լեզուաւ, այս ևս անընթեռնլի. միայն մէկ բառը մերձաւորութեամբ Անոնիոս կարդացի. երրորդ արձանագրութիւն մի եւս գետի կամուրջին մէկ երեսը գրուած է արաբերէն լեզուաւ։

Այս տեղը Պերութէն երկու և կէս ժամ հեռաւորութեամբ է ծովեզերաց ուղղութեամբ միշտ դէպ 'ի հիւսիս։ Սորա ճանապարհին վերայ քաղաքէն երկու ժամ հեռու է գետի այն մասը, զոր երկաթեայ լայն խողովակներով Պերութ կը բերեն։ Ջուրը դարձնելու և Պերութ հասցնելու համար ճիշդ նաւերու շոգեշարժ մեքենաներու նման գործիներ կը բանեցնեն։ Այս գործիները 6 հատ են քովէ քով դրուած. երեքը միասին կը բանին եւ միւս երեքն ևս առանձին։ Սոցա մօտ երեք մեծ աւազաններ շինած են, ջրոց պղտորութեան առեն նախ հոն կը տանին, որ զտուի և մաքրուի։

Գալով Այն-Թուրայի ժեզուիթաց դպրոցին, կարծեմ Դամասկոսի կոտորածէն քիչ մը վերը շինուած է Գաղղիոյ տերութեան ձեռնտուութեամբ։ Ընդարձակ շէնք մի ունի, որոյ ստորնայարկը կը բաղկանայ եկեղեցիէ մը, սեղանատունէ մը եւ այլն. միջնայարկը ունի մէկ ընդարձակ սերտարան և երկու ընդարձակ ննջատուն. դասարանները քանի մի սենեակներ են վերնայարկին մէջ. ուր կայ նոյնպէս երկու ննջարան ևս։ Դպրոցը ունի 150 թոշակաւոր աշակերտ. աշակերտի մը տարեկան թոշակագինն է 2000 ղրուշ բաց 'ի հագուստի, անկողնոյ, թղթի, գրեանց և այլ մասնաւոր ծախսերը, որով դպրոցը տարին 300,000 ղրուշ եկամուտ կ'ունենայ ուսելեաց և դպրոցի պաշտօնէից ծախուց համար։ Այս գումարէն թէ պաշտօնէից և թէ ուսելեաց համար առ առաւելն 200,000 ղրուշ տարեկան ծախս եթէ ըլլայ, մնացեալը անշուշտ ժեզուիթաց կոկորդին և նպատակին լաւ կրնայ ծառայել։ Ուսմունքը միայն նախակրթական է. որովհետեւ նպատակնին միայն լեզու ուսուցանել է, և դխաւորաբար Գաղղերէն։ Թէեւ կ'ուզէի ուսմանց ուղղութեան, ուսուցման եղանակին վերայ ընդարձակ տեղեկութիւններ քաղել. սակայն ճանապարհի դժուարութիւններն անձնական տկարութեան հետ յոգնաբեկ ըրին զիս, և ասոնց հետ մէկ տեղ լաւ առաջնորդի մը պակասութիւնը չը ներեցին այսքանէն աւելի քաղել։ Օրը չորս անգամ ուտելիք կը տան տղայոց. երկու անգամ կերակուր, այն է ճաշ և ընթրիք. առաւօտուն փոքրիկ նախաճաշ մը և ճաշին

digitised by A.R.A.R.@

ու ընթրիքին մէջ տեղն ալ նոյնպէս քիչ մը բան։ Երէկ սեղանատունը պտտած ժամանակս վերջին նախընթրեաց պատրաստութիւնը տեսայ, փոքր կտոր մը հայ 25 տրէմ քանակութեամբ, 3 սալոր և 2 ծիրան։ Դպրոցի դիմացի լեռներուն տեսքը շատ հաճոյարար է։ Զը մոռնամ ըսել, որ այս կողմերը վանքերու և եկեղեցեաց մեծ բազմութիւն կայ. վասն զի որչափ լեռներու և բլուրներու գագաթներ տեսնուին, որք անթիւ են, նոյնչափ զանգակատներ։ Կերեւի թէ Պապութեան ամենէն հարազատ որդիներն հոս են։ Ուրիշ անգամ կը յուսամ աւելի շատ գրել ուրիշ տեղերու առթիւ։

ԿԷԼԻՊՕԼՈՒԷՆ

Կէլիպոլուէն կը գրեն, որ Մայիս 30ին իրենց Աւագ-երէց Տ. Յովհաննէս մաքրակրօն քահանայն առ Աստուած փոխուած է բոլոր ժողովուրդը ոգոյ և թախծութեան մէջ թողով, որովհետեւ յիշեալ քահանայն քառասուն տարի է 'ի վեր է, որ ժողովրդեան հոգեւոր հայրութիւն կ'ընէ եղեր, և այս երկար ժամանակին մէջ իւր բարի վարուք և հեզահամբոյր բնաւորութիւնքը յաջողած է ամենուն սիրտը շահել և դրաւել։ Հոր մը մահը անհնարին թախծութեամբ կը համակէ որդիները, բայց հոգեւոր հոր մը մահը, բոլոր հասարակութիւնը։ Մեռնիլը ամէն մահկանացուի համար բնական է, բայց երանի՜ որոց 'ի Տէր ննջեն, և երանի՜ անոնց, որոնք առաքինւոյ մը յիշատակը սուրբ և անջինջ կը պահեն իրենց մէջ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Մայիս 30.—Յոպպէի տաճիկ երիտասարդ մը կէս աւուր ժամանակ տաճիկ Փերեզակի մը խանութ կը մտնէ մի քանի անառակներու ընկերակցութեամբ և յանկարծ վրան յարձակելով ձեռքովն աչքերը կը գոցէ և դանակը կոկորդը մխելով խլոյն կ'անշնչացնէ խանութպանն։ Փերեզակին դրացիները մեծ մասամբ Քրիստոնեայ լինելով և կիւրակէի առթիւ խանութին գոցած ըլլալով ոճրագործն կը յաջողի շուտով խոյս տալ առանց մէկէ մը տեսնուելու։ Տեղական կառավարութեան կողմէն անմիջապէս բժիշկ կը ղրկուի և քննութեամբ՝ կրատուգուի դանակի հարուածով մեռած լինելն։ Մինչեւ ցարդ խուզարկութիւնները կը շարունակուին. ոճրագործը ճշդիւ երեւան ելած չէ, բայց չորս կասկածաւոր անձինք բանտարկուած են, որոց մին կը կարծուի ոճրագործն։

—31.—Արդէն Հանդիսիս նախորդ թուոմն հրատարակուած էր, քաղաքիս մէջ Մայիս 21ին ուրբաթ օրը տեղի ունեցած յանկարծական երկիւղալից դէպքն։ Տեղւոյս Վսեմ. կառավարիչը ուղելով սոյն տարաձայնութեան աղբիւրն գտնել, յատուկ Քննիչ Մանաժողով մի կազմեց իւր նախագահութեամբ, որոյ անդամակցեցան իւրաքանչիւր ազգէ մասնաւոր անձինք։ Տարէի ժողովէն ընտրուած։ Պատուաւոր անձինք արտօնութիւն ունէին ունկընդիր լինելու։ Խուզարկութիւնք թէ և խստիւ սկսուած էին, և խնդիրը Լատինաց Վանուց վրայ ծանրանալ կ'երեւէր, բայց չ'գիտցուիր թէ ի՞նչ պատճառաւ որոշ վախճան մը չունեցաւ։

—Յունիս 12ին դիշեր ժամանակ քաղաքիս Յոպպէի ըսուած դրան քով եղող Ակաբացի բողոքականաց գրատունը

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Մայիս 30.—Յոպպէի տաճիկ երիտասարդ մը կէս աւուր ժամանակ տաճիկ Փերեզակի մը խանութ կը մտնէ մի քանի անառակներու ընկերակցութեամբ և յանկարծ վրան յարձակելով ձեռքովն աչքերը կը գոցէ և դանակը կոկորդը մխելով խլոյն կ'անշնչացնէ խանութպանն։ Փերեզակին դրացիները մեծ մասամբ Քրիստոնեայ լինելով և կիւրակէի առթիւ խանութին գոցած ըլլալով ոճրագործն կը յաջողի շուտով խոյս տալ առանց մէկէ մը տեսնուելու։ Տեղական կառավարութեան կողմէն անմիջապէս բժիշկ կը ղրկուի և քննութեամբ՝ կրատուգուի դանակի հարուածով մեռած լինելն։ Մինչեւ ցարդ խուզարկութիւնները կը շարունակուին. ոճրագործը ճշդիւ երեւան ելած չէ, բայց չորս կասկածաւոր անձինք բանտարկուած են, որոց մին կը կարծուի ոճրագործն։

—31.—Արդէն Հանդիսիս նախորդ թուոմն հրատարակուած էր, քաղաքիս մէջ Մայիս 21ին ուրբաթ օրը տեղի ունեցած յանկարծական երկիւղալից դէպքն։ Տեղւոյս Վսեմ. կառավարիչը ուղելով սոյն տարաձայնութեան աղբիւրն գտնել, յատուկ Քննիչ Մանաժողով մի կազմեց իւր նախագահութեամբ, որոյ անդամակցեցան իւրաքանչիւր ազգէ մասնաւոր անձինք։ Տարէի ժողովէն ընտրուած։ Պատուաւոր անձինք արտօնութիւն ունէին ունկընդիր լինելու։ Խուզարկութիւնք թէ և խստիւ սկսուած էին, և խնդիրը Լատինաց Վանուց վրայ ծանրանալ կ'երեւէր, բայց չ'գիտցուիր թէ ի՞նչ պատճառաւ որոշ վախճան մը չունեցաւ։

—Յունիս 12ին դիշեր ժամանակ քաղաքիս Յոպպէի ըսուած դրան քով եղող Ակաբացի բողոքականաց գրատունը

digitised by A.R.A.R.@